Արձանագրություն N 7

ՀՀ ԱՆ «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ համապարփակ GIS՝ աշխարհատեղեկատվական համակարգերի հարթակի նախագծման, ստեղծման, տեղադրման, ուսուցման և աջակցման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «Նոյեմբերի» 2025թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Արմեն Ասլյան
Հանձնաժողովի անդամներ	Մարլեն Ղանդիլյան
	Արմեն Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	Զինա Թովմասյան

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

«ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 11.11.2025թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 13.11.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Հարգելի գնահատող հանձնաժողով,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ուսումնասիրելով ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1 ծածկագրով երկու փուլով մրցույթի հրավերի, և մասնավորապես, տեխնիկական առաջադրանքը՝ «ԳԵՈՎԱՅԲ» ՓԲԸ-ի մոտ առաջացել են որոշակի հարցեր՝ կապված տեխնիկական առաջադրանքի հետ, որոնք ունեն պարզաբանման կարիք:

Ուստի ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և նպատակ ունենալով ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները՝ խնդրում ենք ներկայացնել պարզաբանումներ հետևյալ հարցերի վերաբերյալ.

Տեխնոլոգիական փաթեթ և ճարտարապետություն

- Կարո՞ղ եք տրամադրել հրավերում նշված թիրախ համակարգերի ճարտարապետական դիագրամները:
- Կարո՞ղ եք կիսվել առկա տեխնոլոգիական փաթեթի վերաբերյալ փաստաթղթավորմամբ, ներառյալ՝ օգտագործվող ծրագրավորման լեզուները, շրջանակները (frameworks) և գրադարանները (libraries)
- Կարո՞ղ եք տրամադրել տեղակայման մանրամասները՝ տեղում (on-premises), ամպային (cloud) կամ հիբրիդային միջավայրում: Եթե ամպային են, խնդրում ենք նշել մատակարարին և տարածաշրջանը:

API-ներ և ինտեգրում

- Կարո՞ղ եք տրամադրել հրավերում նշված թիրախ համակարգերի ամբողջական API փաստաթղթավորումը, ներառյալ՝
- ✓ API-ի տեսակները (REST, SOAP) և տարբերակավորումը (versioning details)
- ✓ Նույնականացման և թույլտվության մեխանիզմները (Authentication and authorization mechanisms):
- Կարո՞ղ եք ներկայացնել առկա webhook-երի կամ իրադարձությամբ կառավարվող ինտեգրման տարբերակների մասին մանրամասներ:
- Կարո՞ղ եք կիսվել առկա SDK-ների կամ հաճախորդի գրադարանների (client libraries) վերաբերյալ տեղեկությամբ, եթե այդպիսիք կան:
- Կարո՞ղ եք տրամադրել փաստաթղթեր առկա կոնեկտորների կամ միջնորդային ծրագրաշարերի (middleware) վերաբերյալ՝ արտաքին հարթակների հետ ինտեգրման համար:

Տվյալների կառուցվածք և ձևաչափեր

- Կարո՞ղ եք տրամադրել հրավերում նշված թիրախ համակարգերի տվյալների մոդելը՝ ներառյալ սուբյեկտ-հարաբերություն դիագրամները (ERD) կամ սխեմաների փաստաթղթավորումը:
- Կարո՞ղ եք ներկայացնել առկա աղյուսակների և դիտումների (data dictionary) մանրամասն ցանկը՝ ներառյալ դաշտերն ու մետատվյալները, որոնք պետք է ինտեգրվեն GIS համակարգի հետ:

Տվյալների բազայի մանրամասներ

- Կարո՞ղ եք ներկայացնել օգտագործվող տվյալների բազայի տեխնոլոգիաների մանրամասները (Oracle, SQL Server, PostgreSQL և այլն):
- Կարո՞ղ եք տրամադրել փաստաթղթավորում՝ պահուստավորման և վերականգնման ռազմավարությունների վերաբերյալ (backup and recovery strategies):
- Կարո՞ղ եք տրամադրել ինդեքսավորման և արտադրողականության օպտիմալացման մասին տեղեկատվություն (indexing and performance optimization):
- Would you kindly provide certificates or compliance documentation for ISO standards implemented (e.g., ISO 27001 for security)?

Անվտանգություն և համապատասխանություն

- Կարո՞ղ եք տրամադրել Ձեր SS (ICT) բաժնի կողմից իրականացվող անվտանգության քաղաքականությունները:
- Կարո՞ղ եք տրամադրել փաստաթղթեր՝ առկա համակարգերում կիրառվող գաղտնագրման ստանդարտների (encryption standards) վերաբերյալ:
- Կարո՞ղ եք ներկայացնել օգտագործվելիք նույնականացման մեխանիզմների (authentication mechanisms) մանրամասները (OAuth2, SAML, Active Directory):
- Թերությունների (vulnerability) և թափանցման (penetration) թեստերի հետ կապված՝ արդյո՞ք ունենք դրանց կիրարկման ստանդառտ պռոցեդուռաներ: Ո՞վ է կատարում այդ թեստերը և կազմում խոցելիության հաշվետվությունները:
- Կարո՞ղ եք տրամադրել տեղեկատվություն առկա դերահիմնված մուտքի վերահսկման (RBAC) համակարգերի վերաբերյալ:
- Կարո՞ղ եք տրամադրել համապատասխանության կամ սերտիֆիկացման փաստաթղթեր՝ կիրառվող ISO ստանդարտների (օր.՝ ISO 27001 անվտանգության համար) վերաբերյալ:

ISO և Մետատվյալների ստանդարտներ

- Կարո՞ղ եք տրամադրել փաստաթղթավորում՝ համակարգի տվյալների վրա (system data) կիրառվող մետատվյալների ստանդարտների վերաբերյալ (օր.՝ ISO 9001՝ որակի, ISO 27001՝ անվտանգության համար):
- Կարո՞ղ եք ներկայացնել տվյալների կառավարման (Data Governance) շրջանակը (framework) կամ գործող քաղաքականություններ (policies):

Բովանդակություն և տվյալների սեփականություն

- Կարո՞ղ եք տրամադրել մանրամասներ՝ տվյալների կրկնօրինակման կամ միգրացիայի սահմանափակումների (restrictions for data replication or migration) վերաբերյալ:

Արդյունավետություն և մասշտաբայնություն

- Կարո՞ղ եք տրամադրել առկա համակարգերի արդյունավետության չափանիշները (արձագանքման ժամանակ, թողունակություն և այլն((response time, throughput)):
- Վթարներից վերականգնման (Disaster Recovery) համար ունե՞ք սահմանված չափանիշներ կամ պահանջներ վերականգնման ժամանակի վերաբերյալ (benchmarks or requirements for recovery time?):

Համակարգի ճարտարապետություն

- ՀՏՀ-ում (RFP) ներկայացված է համակարգի ճարտարապետություն: Հնարավո՞ր է արդյոք ավելացնել սերվերների քանակը՝ արտադրողականության պահանջները բավարարելու համար:
- Ակնկալվու՞մ է, որ պետք է ապահովվեն երեք միջավայրեր (systems)՝ արտադրական (Production), փորձարկման (Staging) և զարգացման (Development): (Սա կավելացնի լիցենզավորման և սարքավորումների պահանջմունքները):
- ՀՏՀ-ում նշված է, որ անհրաժեշտ է հիմնավորել և քանակապես գնահատել Enterprise ծավալը: Սովորաբար դա կատարվում է առկա ծառայությունների (հրապարակված GIS տվյալների) հիման վրա: Գիտե՞ք, թե քանի քարտեզային ծառայություն է նախատեսվում հրապարակել:
- Արդյո՞ք հաճախորդը տրամադրելու է NAS/SAN պահեստային համակարգ, թե՞ մենք պետք է ներառենք դա մեր հաշվարկներում:
- Կարո՞ղ եք արդյոք տրամադրել C4/ArchiMate ձևաչափով օրինակային դիագրամներ, որոնք օգտագործվում են գործող համակարգերի համար:
- ՀՏՀ-ում կա հղում Bastion/VPN համակարգերին: Գործո՞ւմ է արդյոք VPN կամ այլ նման համակարգեր Ձեր արդեն իսկ ունեցող համակարգերի վրա:

Պարզաբանում

Հարգելի մասնակից,

Շնորհակալություն ենք հայտնում Ձեր ուղարկած հարցման և ցուցաբերված հետաքրքրության համար:

Գնահատող հանձնաժողովը բարձր է գնահատում Ձեր վերաբերմունքը մրցույթի գործընթացի նկատմամբ և կարևորում է գործընկերային հաամագործակցությունը՝ ուղղված թափանցիկության, հավասար մրցակցության և օրենսդրական պահանջների պահպանմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Անդրադառնալով Ձեր գրության մեջ ներկայացված օրենսդրական հղումներին՝ տեղեկացնում ենք, որ ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1 ծածկագրով երկու փուլով մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը ձևավորվել է նույն մրցույթի առաջին փուլում նախաորակավորված մասնակիցների կողմից տրամադրված առաջարկների, ինչպես նաև նույն մասնակիցների հետ տեղի ունեցած միաժամանակյա բանակցությունների արդյունքում:

Հավելեմ նաև, որ հւսնձնաժողովը լիովին առաջնորդվում է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներով և հրավերով՝ հավասար պայմաններ ստեղծելով վերոնշյալ մրցույթի նախավորակավորված բոլոր մասնակիցների համար:

Ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված պարզաբանումների հարցումը՝ տեղեկացնում ենք, որ բոլոր հարցադրումները վերաբերում են մրցույթի տեխնիկական բնութագրի **Առաջին փուլի շրջանակին,** որի նպատակը GIS համակարգի ինտեգրացիաների, ճարտարապետության, տվյալների կառավարման և անվտանգության լուծումների **ուսումնասիրությունն ու նախագծումն է**, ինչպես սահմանված է Տեխնիկական բնութագրի **Առաջին փուլով**:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ մրցութային գործընթացում ընտրված մասնակցի (Կատարողի) կողմից մրցույթի շրջանակում նախատեսված համակարգերի, ենթակառուցվածքների և համապատասխան տեխնիկական փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրությունը կիրականացվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրվող թույլատվությունների և

մուտքի իրավունքների հիման վրա, որոնք Կատարողը կստանա նախարարությանը հասցեագրված գրավոր դիմումով:

1. Թիրախ համակարգերի ճարտարապետական դիագրամների տրամադրման վերաբերյալ

Առաջին փուլի ընթացքում Կատարողը իրականացնում է գործող համակարգերի՝ ARMED, Locator EMS / Locator GPS, Health Master Plan և այլ համակարգերի փոխգործունակության ուսումնասիրություն և վերլուծություն՝ ըստ Տեխնիկական բնութագրի Փուլ 1.7 **«Ինտեգրացիաների պլանավորում (Integration Implementation Planning)» 1.7.1 (Շրջանակ) և 1.7.2 (Աշխատանքներ) կետերի, ինչպես նաև Փուլ 1.3 «Ճարտարապետության իրականացման պլան» 1.3.1–1.3.3 կետերի:**

Նշված կետերի շրջանակում Կատարողը իրականացնում է.

- գործող համակարգերի ճարտարապետության, տվյալահոսքերի և փոխգործունակության վերլուծություն,
- համակարգերի կապերի, տվյալների հոսքերի և միջերեսների քարտեզագրում,
- նախագծվող համակարգի logical և physical ճարտարապետական մոդելների մշակում:

Ճարտարապետական դիագրամները ձևավորվում են հենց այս փուլի ընթացքում՝ վերլուծության և նախագծման արդյունքներով՝ որպես **Architecture Pack (HLA diagrams + Narrative),** ինչպես սահմանված է **Փուլ 1.3.4** կետում:

Ուստի Պատվիրատուն նախապես ճարտարապետական դիագրամներ չի տրամադրում, քանի որ դրանք ենթակա են մշակման Կատարողի կողմից՝ որպես նախագծային deliverable TOR-ի **1.3 և 1.7** բաժիններով նախատեսված աշխատանքների շրջանակում:

2. Տեխնոլոգիական փաթեթի, ծրագրավորման լեզուների, frameworks և գրադարանների վերաբերյալ փաստաթղթավորման տրամադրման մասին:

Առաջին փուլը նախատեսում է տեխնոլոգիական լուծումների ուսումնասիրություն և առաջարկի մշակում՝ համահունչ **Տեխնիկական բնութագրի Փուլ 1.3 «Ճարտարապետության իրականացման պլան» և Փուլ 1.4 «Նախատեսվող սերվերի հզորություն և բաշխվածություն (Sizing & Topology)** բաժինների պահանջներին (մասնավորապես՝ 1.3.1–1.3.4 և 1.4.1–1.4.3 կետեր):

Այս փուլի ընթացքում Կատարողը պարտավոր է.

- ուսումնասիրել ՀՀ ԱՆ գործող SS ենթակառուցվածքը և trust boundaries / deployment տարբերակները՝ ըստ **1.3.1 (C4/ArchiMate, cloud-agnostic Deployment Variant Matrix),**
- վերլուծել համատեղելի տեխնոլոգիաների և պլատֆորմների հնարավորությունները՝ հաշվի առնելով **Sizing & Topology** պահանջները (1.4.1–1.4.2),
- ձևավորել առաջարկվող Technology Stack, որը ներառում է ծրագրավորման լեզուներ, frameworks, գրադարաններ, տվյալների բազաների տեսակներ, ինչպես նաև ինտեգրացիոն միջավայրերի նախագծային առաջարկներ՝ համահունչ **Ինտեգրացիաների պլանավորմանը (Փուլ 1.7):**

Նշված փուլի արդյունքով Կատարողը ներկայացնում է մանրամասն փաստաթղթեր, որոնք հիմնավորում են ընտրված տեխնոլոգիական փաթեթի ընտրությունը՝ կատարողականության, անվտանգության և համատեղելիության տեսանկյուններից՝ ըստ **Deliverables / Acceptance / Gates** պահանջների, որոնք ամրագրված են **1.3.4 և 1.4.3** կետերում:

Հետևաբար, տեխնոլոգիական փաթեթի վերաբերյալ փաստաթղթավորումը ձևավորվում է Կատարողի կողմից հենց Առաջին փուլի ընթացքում՝ որպես նախագծային արդյունք՝ համաձայն **Փուլ 1.3, 1.4 և 1.7** բաժինների:

3. Տեղակայման միջավայրի վերաբերյալ (on-premises, cloud կամ hybrid)

Տեղակայման ռազմավարության և միջավայրերի ընտրության հետ կապված պահանջները սահմանված են Տեխնիկական բնութագրի **Փուլ 1.3 «Ճարտարապետության իրականացման պլան» 1.3.1 (Մեթոդաբանություն և մոտեցում) և 1.3.4 (Deliverables / Acceptance / Gates)** կետերով, որտեղ հստակ ամրագրված է **cloud-agnostic (on-prem ↔ cloud) Deployment Variant Matrix** պահանջը, ինչպես նաև **Deployment Variant Matrix** deliverable-ը:

Ստիպողական չէ նախապես ֆիքսված on-premises, cloud կամ hybrid տարբերակի սահմանումը. **Deployment Strategy-ն և Deployment Variant Matrix**-ը ձևավորվում են Կատարողի կողմից՝ Առաջին փուլի շրջանակում՝ հաշվի առնելով.

- ՀՀ ԱՆ գործող ենթակառուցվածքները և ցանցային/topology սահմանումները՝ ըստ 1.4 **«Sizing & Topology»** բաժնի,
- տվյալների պաշտպանության և տեղեկատվական անվտանգության պահանջները՝ ըստ **Փուլ 1.5 «Անվտանգության պլան»**,
- արտադրողականության, ծախսերի և անվտանգության համեմատական գնահատումը:

Տեղակայման վերջնական տարբերակը որոշվում է Առաջին փուլի վերլուծության արդյունքներով՝ Steering/Պատվիրատուի հետ համաձայնեցված՝ համահունչ **1.3.4 Gates (P1.3-G1 HLA approved; P1.3-G2 Variant Matrix)** պահանջներին:

4. Ինտեգրացիոն համակարգերի վերաբերյալ (ARMED, Locator, Health Master Plan,...)

Առաջին փուլի ընթացքում Կատարողը իրականացնում է ինտեգրացիոն շերտի վերլուծություն և նախագծում՝ ըստ Տեխնիկական բնութագրի **Փուլ 1.7 «Ինտեգրացիաների պլանավորում (Integration Implementation Planning)» 1.7.1 (Շրջանակ) և 1.7.2 (Աշխատանքներ)** կետերի:

Նշված աշխատանքները ներառում են.

- գործող համակարգերի API փաստաթղթերի և ինտեգրացիոն միջերեսների ուսումնասիրություն՝ ARMED, calls.1-03.am, 03.locator.am, Health Master Plan, Cadastre, ԱՎԾ և այլն (ինչպես սահմանված է **1.7.1 Շրջանակ (Scope)** կետում),
- տվյալների կառուցվածքների, փոխանակման ձևաչափերի և մետատվյալների վերլուծություն՝ համաձայն **Աղյուսակ 2 — Data Contract (Schema) Summary,**
- տվյալահոսքերի քարտեզագրում և տվյալների փոխանցման մեխանիզմների նախագծում (RESTful API, JSON/GeoJSON, անհրաժեշտության դեպքում batch՝ CSV/GPKG)՝ ըստ **1.7.2 Tasks** կետի,
- նույնականացման, մուտքի վերահսկման և տվյալների պաշտպանության մեխանիզմների առաջարկ՝ հիմնված **Աղյուսակ 3 — Անվտանգություն (Security Controls) և Աղյուսակ 4 — Rate-Limit & Performance Targets** պահանջների վրա:

Այս փուլում ձևավորվում են ինտեգրացիոն շերտի նախագծային փաստաթղթերը, մասնավորապես՝ **ICD Pack per interface (contracts, examples, auth, error codes)** և թեստավորման հաշվետվությունները, ինչպես սահմանված է 1.7.3 «Մատակարարվող փաթեթ (Deliverables)» կետում:

5. Տվյալների բազայի, մոդելավորման, կառավարման և անվտանգության մոտեցումների վերաբերյալ

Առաջին փուլի ընթացքում Կատարողը մշակում է տվյալների կառավարման ամբողջական քաղաքականություն՝ ըստ Տեխնիկական բնութագրի **Փուլ 1.6 «Տվյալների կառավարման պլան (DMP) — Կատարող պլանավորման պահանջներ» 1.6.1–1.6.9** կետերի, ինչպես նաև անվտանգության բաղադրիչների մասով՝ **Փուլ 1.5 «Անվտանգության պլան»** բաժնի պահանջների:

Այն ներառում է.

• տվյալների կառուցվածքի և փոխկապակցվածության մոդելավորում (ERD սխեմաներ), Data Catalog և Layer/Dataset ինվենտար՝ ըստ 1.6.2 «Շրջանակ և ինվենտար» և Metadata Template Summary աղյուսակի,

• տվյալների բառարանների և մետատվյալների նկարագրություն՝ հիմնված ISO 19115/19139 և ISO 19157 ստանդարտների վրա (1.6.1 և 1.6.3),

• տվյալների հասանելիության, պահպանման և կառավարելիության կանոնների մշակում (Data Governance Policy)՝ Access Levels և Legal Matrix պահանջներով՝ ըստ 1.6.6 «Մուտքի մակարդակներ և իրավական նշումներ»,

• անվտանգության քաղաքականության նախագիծ՝ RBAC, OAuth2/OIDC, TLS1.2+ և HTTPS մեխանիզմներով՝ համահունչ Փուլ 1.5.4 (SSO/RBAC), 1.5.5 (Ցանց և պերիմետր), 1.5.6 (Բաղադրիչների կոդավորում և գաղտնիքներ) և 1.7.2 Աղյուսակ 3 — Security Controls պահանջներին,

• վթարային վերականգնման (Disaster Recovery) ռազմավարություն և արտադրողականության գնահատում՝ համապատասխան 1.5.9 «Միջադեպերի արձագանք և պահուստավորում/վերականգնում» և 1.4.2 «Log/SIEM & Backup Sizing» աղյուսակին:

Այսպիսով, տվյալների բազայի մոդելավորման, կառավարման և անվտանգության մոտեցումները մշակվում են Կատարողի կողմից՝ Առաջին փուլի ընթացքում՝ որպես DMP v1.0, DQ Rules, ETL Timetable, Access & Legal Matrix և Security Plan նախագծային փաթեթների բաղադրիչներ՝ համաձայն Փուլ 1.5 և 1.6 բաժիններով սահմանված deliverables և acceptance չափանիշների:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ձեր ներկայացված բոլոր հարցադրումները ամբողջությամբ վերաբերում են մրցույթի **Առաջին փուլի բովանդակությանը**, և դրանց պատասխանները ձևավորվում են մատակարարի կողմից իրականացվող՝ **ուսումնասիրության, վերլուծության և նախագծման աշխատանքների ընթացքում**:

Առաջին փուլի ընթացքում ձևավորվում են այն բոլոր փաստաթղթերը, որոնց շուրջ կատարվել են հարցադրումները՝ ճարտարապետական դիագրամներ, տեխնոլոգիական փաթեթ, տվյալների բազայի առաջարկվող մոդել, տեղակայման ռազմավարություն, ինտեգրացիոն սխեմաներ, տվյալների մոդել և անվտանգության քաղաքականություն:

Այսպիսով՝ կարծում ենք, որ պարզաբանումների բոլոր հարցերը լիարժեքորեն **բավարարվում են Առաջին փուլի սահմանված պահանջների շրջանակին**, ինչպես սահմանված է Տեխնիկական բնութագրով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,

Հանձնաժողովի նախագահ — Արմեն Ասլյան

Հանձնաժողովի անդամներ — Մարլեն Ղանդիլյան

Արմեն Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար — Զինա Թովմասյան